ՄԵՆՔ ԵՒ ՄԵՐ ՀԱՐԵՒԱՆՆԵՐԸ

(ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ)

Գրեց՝ ԱՐՏ. ԱԲԵՂԵԱՆ

VIII

Անցած յօդուածում*) մենք տեսանք, թէ Անդրկովկասի հայութիւնը, սկսած ռուսական տիրապետութեան առաջին օրերից, թուական ի՛նչ փոփոխութիւններ կրեց, գրեթէ մէկ դարու ընթացքին: Տեսանք նաեւ, թէ ի՛նչ պատկեր էր ներկայացնում այդ տեսակէտից յատկապէս «Հայկական Շրջանը» — այն հողամասը, որ սկզբնապէս համարւում էր Անդրկովկասեան Հայաստան:

Այժմ տեսնենք, թէ պատերազմի առաջին տարիների իրականութիւնը ի՛նչ է ասում: Ընթերցողը վերահասու եղաւ արդէն, որ անդրկովկասեան հայութեան հողային պահանջները այդ միջոցին զգալապէս ընդարձակուել էին, բաղդատութեամբ երբեմնի «Հայկական Շրջան»ի:

Հայ հանրային – քաղաքական միտքը 1916–ին արդարացիօրէն պահանջում էր, որ նախագծուած զեմստվօի (գաւառական ինքնավարութիւն) իրականացման հետ միաժամանակ, աւելի շուտ՝ նրանից առաջ վարչական ո՛ր բաժանումների ենթարկուի Անդրկովկասը, համաձայն ազգային եւ տնտեսական սկզբունքի: Այդպիսով պիտի սահմանորոշուէր Անդրկովկասեան Հայաստանը, որպէս այդ երկրամասի հայութեան ազգային տերրիտորիա: Երկրորդական խնդիր էր այնուհետեւ, թէ Անդրկովկասեան Հայաստանը (ինչպէս նաեւ՝ Վրաստանը եւ Ատրբէջանը) մէ՞կ հատիկ, թէ՞ մէկից աւելի նահանգներ պիտի ներկայացնէր: Քանի որ այն ժամանակ քաղաքական անկախութեան խնդիր չկար հրապարակում, այլ միայն գաւառական, առառաւելն՝ ազգային–հողային ինքնավարութեան խնդիր եւ կամ աւելի շուտ, տակաւին դրա գիտակցութիւնը միայն, այդ պատճառով էլ քաղաքական շրջանակները — աւելի շուտ՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը — յարմար էին սեպում, որ սահմանորոշելիք հայկական հողամասը երեք նահանգների բաժանուի: Այդ ամբողջ աշխատութեանց ընթացքին իր բեղուն եւ եռանդուն մասնակցութիւնը բերաւ մանաւանդ մեր վաղամեռ եւ խոստմնալից ընկեր Աւետիք Շահխաթունեանը, նուիրելով այդ խնդրին լրագրական բաղմաթիւ յօդուածներ (ռուսերէն եւ հայերէն), ինչպէս նաեւ մի յատուկ աշխատութիւն՝ ռուսերէն լեզուով, ամբոնելի եւ ընդունելի կացուցանելու համար մեր հարեւանների աչքում եւս հայութեան հողային իրաւունքները Անդրկովկասի սահմաններում:

Համաձայն այդ նախագծի, որ դժբախտաբար իր իրականացման նախօրեակին հէնց անյաջողութեան մատնուեց Ռուսաստանի վերիվայրումների պատճառով, որով եւ յետագային այնչափ պայքարների դուռ բացուեց մեր եւ մեր հարեւանների միջեւ,— համաձայն այդ նախագծի՝ Անդրկովկասեան Հայաստանը ծրագրւում էր բաժանել հետեւեալ երեք նահանգների — Երեւան, Շիրակ (Ալեքսանդրապոլ) եւ Գանձակ:

Երեւանի նահանգը իր կարգին բաժանուելու էր վեց գաւառների — Էջմիածին, Երեւան, Նոր–Բայազիտ, Շարուր, Նախիջեւան եւ Սուրմալու:

Այդպէս բաժանուած նահանգը (Երեւան) ներկայացնելու էր հետեւեալ թուական պատկերը, ցեղային տեսակէտից: (Բնակչութեան թուերը հաշուած են 1000–ներով):

*) Տե՛ս «Հայրենիք» ամսագիր Զ. տարի, թիւ 2: